Պատմեն և օրհնակ ուխտին

Յանուն հօր և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ. Ամէն։

Լուր ինձ Հայր սուրբ, անարժան ծառայիդ, որ եմ տկար ամենայնի, բայց շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ուխտեմ յօժար կամօք իմովք առաջի Աստուծոյ, և Որբուհւոյ կուսին Մարիամու. և սրբոց հրեշտակապետաց. և ամենայն սրբոց և սրբուհեաց, մանաւանդ առաջի պահապան հրեշտակի իմոյ և յատուկ Աստուածամօր միշտ կուսի, որ է պաշտպան իմ։ Եւ ես առաջի Գերապայծառ Տէրութեանդ, և առաջի Վերապատուելի հարց և եղբարց ներկայից յանձնեմ և նուիրեմ զիս աստուծոյ, նախ ուխտեմ զողջախոհութիւն առ ամենայն զգայարան իմ ներքոյ և արտաքոյ։ Երկրորդ՝ ուխտեմ զհնազանդութիւն յատուկ եպիսկոպոսիդ իմոյ յամենայն զօրութենէ հոգւոյ և մարմնոյ։ Երրորդ՝ ուխտեմ զաղքատութիւն կամաւոր զամենայն կեանս իմ։ Եւ զարձեալ, խոստանամ ուխտեմ և երդնում պահել զհաւատն սրբոյ Եկեղեցւոյն Հոսմայ, որ է կաթուղիկէ և առաքելական. և ըստ կարողութեան իմում ուսուցանեմ։ Յօժար կամօք հաճեցայ զայսոսիկ. Օգնեսցէ ինձ Աստուած. Ամէն։

Ցամի տեառն, 1731 ի սեպտեմբերի 8

Ի Տօնի Ննդեան կուսին մարիամու աստուածամօրն։

ՂԹ.

Կարճառօտ նամակ մը, որ բաց ի զորովանքի գեղեցիկ արտայայտութենէ մը առ Մխիթար, կը ներկայացնէ մէկ երկու դէպքերու հետ ազգային սովորութիւն մը Գլուժի հայ գաղութին մէջ։

Օ. Յ. Ք.

Գերապայծառի և Գերյարգելոյ տեառն Մխիթարայ Աբբայի
Հօրդ մերում մեծաւ խոնարհութեամբ մատուցանեմ զողջոյն, և այլն.

Որպէս մեղուն փափաքի զարնանային և ամառնային ծաղկանց, զի անտի ծծիցէ զքաղցրութիւն մեղերն, նոյնպէս և ես տառապեալս փափաքիմ զարնանային և ամառնային քարտիզաց Գերյարգելութեանդ, որպէս զի անտի ծծիցեմ զքաղցրութիւն մխիթարութեան...։ .. մի քարտէզն Գերյարգելութեանդ (թէպէտ և իցէ կշտամբողական) արժէ ինձ աւելի քան զհազար Ամէնօպոլիս և Էլիզապէթապոլիս։... այժմ վերստին սկսեալ է ժանտամահն ի հունկարիայ, և առաւել քան զառաջինն արգելեալք են ճանապարհքն։ Ի պէջէն կարեն անցանել առ մեզ առանց զօնդօմացիայի. բայց աստի ոչ կարեն անդր անցանել։ Իսկ Հայք բազմիցս գնան ի պէջն Բօշդայով...։ Ուր տէր Նիկօլն վաղճանեալ է...։ Աստ թանկութիւն հացի է, և սիրոյ և միաբանութեան մանաւանդ ի մէջ հայոց...։

Պատրաստական ամենայնի
Նուաստագունեղ ծառայ
Հ. Թէոդորոս Յովհաննիսեան
Կրօնաւոր ի Կարգէ Ս. Ա. Աբ.

Ցամի Տեառն 1740
Օգոստոսի 7
Ի Գլուժին սէմինարն

P: S: Յ։ Գ։ Յայսմիկ ամսոյ 15ին ի տօնի Վերափոխման սովորք են գալ ի գլուժն հայք թափորիւ ի Կեռլայէն և ի Պաշֆալովէն, ի լիակատար Ներողութիւն յեկեղեցին Ճէզվիթաներուն. վասն որոյ Ճէզվիթայքն ամսով յառաջ խնդրեցին զիս նախապատրաստիլ առ ի հայնակ զքարոզ ասել ի նմին աւուր. և սկսեալ էի նախապատրաստել զքարոզ։ Բայց աստ ես եհաս նախանձ բանսարկուին. քանզի դրդեաց զՏէր Նիկօլն դոտէրաշեան գալ ի գլուժն, և խնդրել վասն քարոզութեան, զի մի այլ ոք քարոզեսցէ, այլ ինքն։